Տպել

Լիբանանի հայկական դպրոցներում հայոց պատմությունը կդասավանդեն նոր դասագրքերով: Գրքերի պատրաստման աշխատանքները նախատեսվում է իրականացնել առաջիկա մեկ տարվա ընթացքում: Համայնքի տարբեր դպրոցներին, որոնք մինչ այժմ «Հայոց պատմություն» առարկան դասավանդում են տարբեր դասագրքերով, կառաջարկվի մեկ միասնական դասագիրք: Հարցը քննարկվել է նոյեմբերի 9-ից 16-ը ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի փոխտնօրեն Մհեր Հովհաննիսյանի և ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան Էդիկ Մինասյանի՝ Լիբանան կատարած գործուղման շրջանակում:

«Տեղի կրթօջախների ղեկավարների և ուսուցիչների հետ քննարկումներանցկացվեցին հարցի վերաբերյալ: Ներկայումս հայոց պատմությունը Լիբանանի հայկական դպրոցներում դասավանդվում է նախորդ դարի 2-րդ կեսին տպագրված գրքերով, որոնք տեքստային առումով բարդ են և ծավալուն: Ուսուցիչները նշում են, որ ներկայիս գրքերը պատկերազարդ չեն և դրանցում բացակայում են քարտեզները, ինչը ևս կարևոր խնդիր է: Բացի այդ, գրքերը որոշ շտկումների և հավելումների կարիք ունեն»,- նշեց Էդիկ Մինասյանը:
«Առաջինից երրորդ դասարանի աշակերտներին դասավանդվելու է առավելապես ճանաչողական, հայրենագիտական բնույթ կրող հայոց պատմություն: Դասագրքերը պատրաստվելու են ԵՊՀ պատմության և Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի, ինչպես նաև լիբանանահայ մասնագետների ջանքերով: Նյութը մատուցվելու է արևմտահայերեն, դասական ուղղագրությամբ»,-նշեց ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի փոխտնօրեն Մհեր Հովհաննիսյանը:
Հիշեցնենք, որ հարցը քննարկվել էր Մ. Հովհաննիսյանի՝ սույն թվականի մայիսին Լիբանան կատարած այցելության ժամանակ: (Տե՛ս նաև)

Վերադառնալ

Հայաստանը և տարածաշրջանը միջազգային հարթակում
Գիտաժողովներ
Մագիստրոսական ծրագրեր
Հեռաուսուցում
Նորություններ
Աշխատանքային շտեմարան
Հղումներ
Գործընկերներ
Կայքի քարտեզ

YouTube Channel

Շատ դիտել են
Նորություն 25/01/12
2012թ-ի ԱՌԱՋԻՆ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ ԵՊՀ-ի ԵՎ ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ
Դիտումներ - 5150
Հանրագիտարան
Հայկական լեռնաշխարհ
Դիտումներ - 6475
Տեսաֆիլմեր
ՀՀԻ-ի ձևավորման պատմությունը
Դիտումներ - 8713
Քարտեզներ
ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀ (ԲՆԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՔԱՐՏԵԶ)
Դիտումներ - 6746
Հոդվածներ
ИЗ ИСТОРИИ АРМЯНО-КИТАЙСКИХ ОТНОШЕНИЙ
Դիտումներ - 3015
Գրքեր
ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ
Դիտումներ - 632
Փաստաթղթեր
ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԲԱՔՎԻ ԵՎ ԵԼԻԶԱՎԵՏԱՊՈԼԻ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ 1918-1920թթ. (Փաստաթղթերի ու նյութերի ժողովածու)
Դիտումներ - 163

Մարտ 2024
երկ երք չրք հնգ ուրբ շբթ
1 2
4 5 6 7 8 9
11 12 13 14 15 16
18 19 20 21 22 23
25 26 27 28 29 30

ՀՀ, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1,
ԵՊՀ 2-րդ մասնաշենք, 5-րդ հարկ,
Հեռ.՝ + 37460 71-00-92
Էլ-փոստ՝ info@armin.am
© ԵՊՀ Հայագիտական Հետազոտությունների Ինստիտուտ:

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Կայքի նյութերի մասնակի կամ ամբողջական օգտագործ մեջբերումների կատարմ դեպքում հղումը www.armin.am -ին պարտ է: